ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 16

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքը (Խաչփար բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ*

*(Մասիս համայնքի (Խաչփար բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքը (Խաչփար բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արարատ-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի (Խաչփար բնակավայրի)<br>Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 03-050-0113-0156 կադաստրային ծածկագրով 0.05323 հա մակերեսով և 03-050-0113-0155 կադաստրային ծածկագրով 0.08519 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք | 03-050-0113-0156 կադաստրային ծածկագրով 0.05323 հա մակերեսով և 03-050-0113-0155 կադաստրային ծածկագրով 0.08519 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով.

- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից նշված պայմանը (կցվում է),

4. Մասիս համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Խաչփար բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի (Խաչփար բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ե. Վարդանյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝ ճարտարապետության և քաղաքաշինությանվարչության պետի աշխատանքային պարտականությունները կատարող* | | |
| | | Լ. Սարգսյան |

Երևան, « 16 » «հունվարի» 2024 թ.